

ՏՕՆ ԱՄԵՆԱՅՆ ՄԻՈՑ

ՀՆԻՑ ԵՒ ՆՈՐՈՑ, ՅԼՅՏԻՑ ԵՒ ԱՆՅԼՅՏԻՑ



Հեղինակ՝
ԷՆՅՈՒ ԲԵԱՆՔԻ

Թարգմանեց՝
ՍԱՆՏՈՑ ՎԱԷ ԴԱԶԱՐԵԱՆ

ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՈՂՄԻՑ

Սիրելի Ընթերցող,

օգտագործելով հաղորդակցութեան ներկայ միջոցները, անձնական նախաձեռնութեամբ՝ փորձում եմ իմ համեստ նպաստս բերել մեր ազգային հոգեւոր կեանքին, նաեւ համացանցի միջոցով տարածելով քրիստոնէական փոքրիկ գրութիւններ, այսպիսով յաղթահարելով աշխարհագրական սահմանափակումներն ու առաքումի ժամանակները: Փափաքս է հաղորդել քեզ այն՝ ինչ ինձ հաղորդուեց Նախախնամութեան գծած զանազան ճանապարհներով:

Կարող ես քո մասնակցութիւնը բերել Աստուծոյ Խօսքին մատուցուած այս ծառայութեանը, հաղորդելով քո մերձաւոր ու հեռաւոր ծանօթներին ահա այս համացանցային հասցէն.

gradaran@mashtoz.org

Այս հասցէին գրելով, նրանց հասցէները նոյնպէս կ'անցնեն իմ անուանացանկի մէջ եւ յաղորդաբար նրանք նոյնպէս կը ստանան հոգեւոր նոր գրութիւնների հրատարակումը տեղեկացնող նամակները: Այս ծառայութիւնն անվճար է:

Այս գործին որեւէ առաջարկ կամ օգնութիւն հասցնելու, որեւէ տեղեկութիւն խնդրելու կամ հարցումներ ներկայացնելու համար կարող ես գործածել համացանցային վերոնշեալ հասցէն:

*Կանխայայտ շնորհակալութեամբ եւ լաւագոյն մաղթանքներով,
եղբայրդ ի Քրիստոս Յիսուս՝*

Մաշտոց Վահէ Ղազարեան

ԸՆԹԵՐՑՈՒՄՆԵՐ

Յովհաննէսի Յայտնութիւն 7, 1-17

Յովհաննէսի Առաջին Նամակ 3, 1-3

Աւետարան ըստ Մատթէոսի 5, 1-12

ՄՈՒՏՔ

Սիրելիներ, աշնանը, տարուայ վերջին եղանակի վերջին ամսին, երկրի վրայ տեղի ունեցած բոլոր հաւաքներից եւ բոլոր հունձքերից յետոյ, Եկեղեցին մեզ հրաւիրում է հայելու Աստուծոյ նուիրուած բոլոր կենդանի գոհների հունձքը, հունձքը ընծայուած եւ Տիրոջը վերադարձած կեանքերի, Աստուծոյ մօտ հաւաքը բոլոր հասուն պտուղների, որոնց հասունացման պատճառը, պայմանն ու հնարաւորութիւնը Տիրոջ սիրոյ եւ շնորհի ներկայութիւնն է մարդկանց մէջ:

Ամենայն Սրբոց տօնը, որ մենք այսօր տօնում ենք, իրօք յուշարձանն է Քրիստոսի Եկեղեցու փառահեղ աշնան: Տօնն է ընդդէմ միայնութեան, ընդդէմ ամէն տեսակի կղզիացման, որ գրաւում է մարդկային սիրտը:

Այսօր մենք պէտք է երգենք. «Մենք միայնակ չենք, մենք Հաղորդութիւն ենք»: Այսօր պէտք է վերանորոգենք զատկական երգը, որովհետեւ եթէ Ջատկի օրերին հայում էինք Հօր աջ կողմում յաւիտեան կենդանի Քրիստոսին, այսօր, Ջատկից առատօրէն բխած յարութեանկան զօրութեան շնորհիւ, մենք հայում ենք նրանց՝ ովքեր Քրիստոսի հետ են Հօր աջ կողմում. Սրբերը: Ջատկի օրերին երգում էինք՝ թէ որթատունկը կենդանի է, յարութիւն առած. այսօր Եկեղեցին մեզ երգել է տալիս՝ թէ ոստերը տուեցին իրենց պտուղները, թէ Քրիստոս–որթատունկի վրայ Հօր կողմից պատուաստուած եւ յօտուած ոստերը տուեցին առատ բերքահաւաք, եւ որ այս ողիւյզները, որթատունկի այս պտուղները, բոլորը միասին բաղադրում են մէկ միակ գինի. Աստուծոյ Արքայութեան գինին: Եթէ Սրբերը չլինէին, եթէ մենք չհաւատայինք երկնքի եւ երկրի Սրբերի Հաղորդութեանը, փակուած կը լինէինք յուսահատ եւ յուսահատեցուցիչ միայնութեան մէջ: Անշուշտ պարզ պատահականութիւն չէ, որ Հաւատամքը մեր հաւատքի դաւանութեան մէջ մեզ ասել է տալիս ո՛չ միայն «հաւատում եմ Հօրը, Որդուն եւ Սուրբ Հոգուն», այլ նաեւ. «հաւատում եմ Եկեղեցուն», հաւատում եմ Սրբերի Հաղորդութեանը, մեղքերի թողութեանը եւ յաւիտեանական կեանքին:

Յիսուս եկել է՝ որպէսզի մարդիկ, իր գառները, կեանք ունենան եւ առատօրէն ունենան: Եկել է մեզ հետ որպէս եղբայր մնալու, բայց նաեւ մեզ տանելու համար այնտեղ՝ ուր ինքն է: «Ուր ես եմ, կամենում եմ՝ որ լինի նաեւ իմ ծառան»¹, – ասել է Յիսուս օրէնսդրական ոճով, արարչագործ եւ հզօր խօսքով. ո՛չ միայն խնդրել է Հօրից, այլ նաեւ ասել է «ես կամենում եմ», աստուածային կամքի արդիւնաւէտ մի ներգործութեամբ:

Ահա այսօր մենք հայում ենք այս խորհուրդին. Քրիստոսի հետ, Քրիստոսի մէջ եւ Քրիստոսի համար մահացածները ողջ են իր հետ, կազմում են Սրբերի մի Հաղորդութիւն, եւ քանի որ մենք անդամներն ենք Քրիստոսի Մարմնի, իսկ նրանք՝ Տիրոջ փառաւոր մարմնի փառաւոր անդամները, մենք Հաղորդութեան մէջ ենք մէկս միւսի հետ, պանդուխտ Եկեղեցին երկնային Եկեղեցու հետ, միասին կազմելով Տիրոջ մէկ միակ եւ ամբողջական Մարմինը: Այսօր առաւել քան երբեք մեր հասարակութիւններում պէտք է այրուի խունկը եւ վեր բարձրանայ, որպէս նշան երկրային Եկեղեցու եւ երկնային Եկեղեցու կապակցութեան, որովհետեւ այնտեղի՝ վերեւի Եկեղեցին, երկնային Երուսաղէմը, սպասում է իր որդիներին թուի

¹ Հմմտ. Յվհ 17, 24; 12, 26

ամբողջացմանը, եւ մի Երուսաղէմ է կեանքով լի, Աստծոյ մօտ փառաւորուած, Քրիստոսի հետ, յաւիտենութեան համար²:

Երկնքի Սրբերը այսպէս ասած ննջումի վիճակում չեն, սպասելով վերջնական եւ ամբողջական յարութեանը. նրանք անձինք են՝ որ իսկապէս եւ ամբողջովին մահացել են, մահացել են հոգով, մահացել են մարմնով, բայց նրանց հասել է Տիրոջ Յարութեան ներգործութիւնը. «Այօր ի՞նչ դու կը լինես ինձ հետ դրախտում»³. ո՛չ թէ ննջեցեալների յարութեանը, վերջին օրը, այլ այսօր, այսօ՛ր:

Սրբերը պատուաստուած են յաւիտենութեան մէջ փառաւորուած Քրիստոսին, յաւիտենութեան մէջ, դուրս՝ ժամանակից, որը մենք հաշուում ենք եւ չափում, որովհետեւ երկրային ենք. Սրբերը կենդանի են յաւէտ, որովհետեւ Քրիստոսի հետ են, իսկ ով Քրիստոսի հետ է, նրա հետ ապրում է յաւէտ: «Եթէ մէկը հաւատում է ինձ, նոյնիսկ եթէ մահանայ՝ կ'ապրի»⁴. սա Տիրոջ խոստումն է, որ չի կարող չկատարուել:

Բայց, ինչպէս ասացինք սկզբում, Սրբերի տօնը, բոլո՛ր Սրբերի տօնը, նախեւառաջ տօնն է ընդդէմ հաւատացեալի միայնութեան, կղզիացման: Սա կարեւոր է եւ հարկաւոր է ընդգծել:

Եկեղեցու Հայրերը – յատկապէս առաջին դարերի Հայրերը մինչեւ 4րդ դարը – Սրբերի մասին յաճախ խօսում են՝ գործածելով երկու եզրեր. Սրբի մասին խօսում են որպէս *անփեփանելի ընկեր (aóratos philos)* եւ որպէս *նեբանչնական ընկեր (gnésios philos)*: Խօսում են Սրբի մասին որպէս ապրող մի անձ, որ մօտ է իրենց եւ իրենց ընկերակցում է իր ներկայութեամբ եւ իր կարողութեամբ: 2րդ, 3րդ եւ 4րդ դարերի Եկեղեցու Հայրերը երբեք մոռացութեան չեն մատնել մեր հաւատքի քրիստոսակենտրոնութիւնը եւ միակ փրկութեան դաւանութիւնը, փրկութեան՝ որ մեզ տրուել է միմիայն Քրիստոսի կողմից, բայց հրաւիրում են նաեւ տեսնելու, Քրիստոսի կողքին, մտերիմ ընկերների մի շքախումբ, որոնք նրանում եւ միմիայն նրա շնորհիւ նաեւ մեր մտերիմ ընկերներն են:

Երբեմն մի տեսակ զգացումն ենք ունենում, թէ այս վերջին տասնամեակներում մթազնել է Սրբերի Հաղորդութեան, մեր կողքին ներկայ Սրբի այս ընկալումը, այս հաւատքը, այս փորձառութիւնը:

Եւ սակայն ճիշտ սա է՝ որ սնուցել է անթիւ ու անհամար հաւատացեալների հաւատքի եւ սրբութեան կեանքը, Որդիինչսից սկսած մինչեւ մեր օրերը: Սուրբը մի ներկայութիւն է քրիստոնեայի եւ Եկեղեցու համար, եւ արդիւնաւէ՛տ ներկայութիւն է: Եբրայեցիներին ուղղուած Նամակն արդէն ասում է յստակ կերպով.

Հաւատքով եւ եկեղեցային կեանքով դուք մօտեցել էք երկնային Երուսաղէմին, բիւր հրեշտակներին, երկնքում արձանագրուած անդրանիկների տօնական հաւաքին, ողորմած դատաւոր Աստծուն, արդարների հոգիներին՝ որոնք տարուել հասցուել են կատարելութեանը, լիութեանը⁵:

«Մենք միայնակ չենք», կրկին ասում է Եբրայեցիներին ուղղուած Նամակը, «այլ շրջապատուած ենք վկաների մի հոծ բազմութեամբ»⁶. նրանց հետ մենք կազմում ենք Քրիստոսի Մարմինը, նրանց հետ մենք Աստծոյ որդիներն ենք եւ Աստծոյ Որդին: Եթէ Եկեղեցին կամեցել է՝ որ մկրտութեան ժամանակ երեսային տրուի Սրբերից մէկի անունը, պատճառը ճիշտ սա է. որպէսզի քրիստոնէական

² Հմմտ. Գղտ 4, 26...

³ Ղուկ 23, 43

⁴ Յիւհ 11, 25

⁵ Հմմտ. Եբր 12, 22...

⁶ Եբր 12, 1

հաւատքի մեր կեանքում սովորենք տեսնել ընկերներ, անտեսանելի ու ներանձնական ընկերներ:

Ինչպէս երկրի վրայ ունենք ընկերներ եւ մտերիմներ, նմանապէս նաեւ երկնքում. Սրբերը: Բայց պէտք է ասել, ինչպէս ասում էր արդէն Որոգինէսը, որ սա մի պարզ համանմանութիւնն է: Իրականում Սրբերը մեզ շա՛տ աւելի մօտ են, քան նրանք՝ ովքեր մեզ հետ են երկրի վրայ, ովքեր բնակւում են մեր տանը, ովքեր մեր շուրջը ընկնում են: Սրբերը ճանաչում են մեզ աւելի խորապէս եւ սիրում են մեզ առաւել հզօր սիրով, քան նրանք՝ ովքեր երկրի վրայ մեզ ճանաչում ու սիրում են բոլորից աւելի:

Քրիստոսի մէջ, նրանց եւ մեր միջեւ հաստատւում է մի այնպիսի մտերմութիւն, որ գերազանցում է այստեղ՝ երկրի վրայ ունեցած մեր յարաբերութիւններին: Եւ երկնային Արքայութիւնից Սրբերը կարող են շատ աւելի, ներկայ են շատ աւելի, ընդունակ են գործելու շատ աւելի, քան այն ժամանակ՝ երբ մեզ հետ երկրի վրայ էին, քան նրանք՝ ովքեր, սուրբ լինելով հանդերձ, տակաւին երկրի վրայ են, մեր կողքին:

Սա է Սրբերի Հաղորդութիւնը, որ այսօր մենք տօնում ենք: Երբ մեզնից իւրաքանչիւրն իր սրտում երգում է. Ս՝-րբ Յ՝ճաննէ՝ Մկրտիչ, Ս՝-րբ Գ՝րիԳ՝ր Լ՝-սա՝-րիչ, Ս՝-րբ Օգոստինոս, Ս՝-րբ Ներսէս Շնորհալի, Ս՝-րբ Գ՝րիԳ՝ր Նարեկացի, Ս՝-րբ Բարսեղ, Ս՝-րբ Բենեդեկոս, Սրբո՛ւհի Հոփոփմէ, Սրբո՛ւհի Թեթեղա, մենք հաւատում ենք՝ որ կը զգանք Սրբերի հաւաքուելը մեր չորսբոլորը, կը զգանք նրանց ներկայութիւնը, նրանց գործը, մինչեւ որ կը զգանք մեր իրական Հաղորդութիւնը նրանց հետ, եւ սա միշտ հիմնուած այն միակ վէժի վրայ՝ որ Քրիստոս է: Փառահեղ Քրիստոսը միայնակ է, այլ գալիս է մեր մօտ Հրեշտակների ու Սրբերի ընկերակցութեամբ, նրանցով շրջապատուած, ինչպէս ասում է Պօղոս Առաքեալը⁷, նա գալիս է Փեսայի մտերիմ ընկերների հետ միասին:

Սրբերը նրանք են՝ ովքեր աղօթում են մեր համար, բարեխօսում, ներկայ են մեր կողքին եւ բարեկամ են մեզ. իրօք, մեծագոյն մտերմութիւններն են սրանք: Եւ արդիւնաւէտ մտերմութիւններ են, որովհետեւ նրանց կամքը այլեւս նոյնացած է Քրիստոսի՝ մեր եւ նրանց միակ Տիրոջ անձում բացայայտուած Աստուծոյ կամքին: Առանց Սրբերի հետ Հաղորդութեան, առանց երկնային Երուսաղէմի հետ Հաղորդութեան, իսկապէս ունայն կը լինէր մեզ համար մտածելը կամ կամենալը եկեղեցային Հաղորդութիւնն այստեղի, այնպէս՝ ինչպէս հակասական կը լինէր մեծագոյն սէր սնուցել Աստուծոյ տակաւին երկրի վրայ ապրող ժողովուրդի հանդէպ:

Այսպէս է. մենք միայնակ չենք, այլ բոլորս Քրիստոսի մէջ կազմում ենք նրա խորհրդաւոր Մարմինը, պանդուխտ՝ մինչեւ մահուան ժամը, փառաւոր՝ երկնքում յաւէտ:

⁷ Հմմտ. 1Թու 3, 13

Եւ այժմ, գիտակից՝ որ միացած ենք երկնային Երուսաղէմին եւ ճիշտ որովհետեւ հաւատում ենք Սրբերի Հաղորդութեանը, աղօթենք՝ խնդրելով նրանց պաշտպանութիւնը մեր հոգեւոր կեանքի ճանապարհին: Թող այս աղօթքը տեսանելի նշանը լինի Սրբերի Հաղորդութեան մեր հաւատքի, մասնակցութիւնը՝ այս օրերին, որ օրն է ընդդէմ ամէն տեսակ միայնութեան ու կղզիացումի:

Հայր, կեանքի աղբիւր.

ողորմիր մեզ:

Որդի, մարդացած Խօսք.

ողորմիր մեզ:

Սուրբ Հոգի, սիրոյ զօրութիւն.

ողորմիր մեզ:

Մէկ Աստուած, երիցս Սուրբ.

ողորմիր մեզ:

Գաբրիէլ, աստուածային աւետիսների մեծ հրեշտակ,

բարեխօսիր մեր համար:

Ռաֆայէլ, աստուածային բժշկումների մեծ հրեշտակ,

բարեխօսիր մեր համար:

Միքայէլ, Աստուծոյ համար մղուած մարտնչումների մեծ հրեշտակ,

բարեխօսիր մեր համար:

Աբրահամ, հաւատքի մեր հայր,

բարեխօսիր մեր համար:

Մովսէս, Աստուծոյ մտերիմ եւ մեծ միջնորդ,

բարեխօսիր մեր համար:

Եղիա, մարգարէական խօսքի հաւատարիմ ծառայ,

բարեխօսիր մեր համար:

Դուք, բոլոր Մարգարէներ, Մեսիան աւետողներ,

բարեխօսեցէք մեր համար:

Յովհաննէս Մկրտիչ, Փեսայի մտերիմ,

բարեխօսիր մեր համար:

Մարիամ, Ամենասրբուհի Կոյս Տիրամայր,

բարեխօսիր մեր համար:

Յովսէփ, Սրբուհի Աստուածածնի ողջախոհ պաշտպան,

բարեխօսիր մեր համար:

Դուք բոլորդ, որ միաւորեցիք Հին եւ Նոր Ուխտերը,

բարեխօսեցէք մեր համար:

Սուրբ Առաքեալներ, որ լսեցիք, տեսաք
եւ շօշափեցիք Խօսքը,

բարեխօսեցէք մեր համար:

Սուրբ Աւետարանիչներ, որ պահպանեցիք
եւ տարածեցիք Բարի Լուրը,

բարեխօսեցէք մեր համար:

Սուրբ Աշակերտներ, որ հետեւեցիք Փրկչին
Իր կեանքի ընթացքում,

բարեխօսեցէք մեր համար:

Մարիամ Մագդաղէնացի,
որ առաջինը տեսար Յարուցեալին,

բարեխօսիր մեր համար:

Դուք, բարեպաշտ կանայք,
որ մինչեւ մահ հետեւեցիք Յիսուսին,

բարեխօսեցէք մեր համար:

Ստեփանոս, քրիստոնեայ առաջին մարտիրոս,

բարեխօսիր մեր համար:

Թադէոս եւ Բարթոլղիմէոս Առաքեալներ,
ճշմարտութեան քարոզիչներ Հայաստանում,

բարեխօսեցէք մեր համար:

Սուրբ Գրիգոր Պարթեւ,
հայկազուն ազգի Լուսաւորիչ,

բարեխօսիր մեր համար:

Սուրբ Մեսրոպ Մաշտոց,
Աստուծոյ Խօսքին հայ լեզու շնորհող,

բարեխօսիր մեր համար:

Սուրբ Ներսէս, արդարութեան Արեգակի
փառքը շնորհալիօրէն երգող,

բարեխօսիր մեր համար:

Սուրբ Ներսէս Լամբրոնացի, հովուական
ծառայութեան կանչուած խոնարհ վանական,

բարեխօսիր մեր համար:

Սուրբ Գրիգոր Նարեկացի,
պարծանք հայկական վանականութեան,

բարեխօսիր մեր համար:

Հայ Եկեղեցու բոլոր պանծալի Սրբեր եւ Սրբուհիներ,

բարեխօսեցէք մեր համար:

Աբբա Անտոն, Աստուծոյ ճանապարհների
ուսուցիչ՝ անապատի խորքում,

բարեխօսիր մեր համար:

Աբբա Պակոմ, վանական հասարակութիւնների հայր,

բարեխօսիր մեր համար:

Աբբա Պիմէն, եղբայրների նկատմամբ
գթառատ եւ կարեկցանքով լի սիրտ,

բարեխօսիր մեր համար:

Աբբա Մակար,
Աստուծոյ ողորմութեան հայելի երկրի վրայ,

բարեխօսիր մեր համար:

Աբբա Մովսէս,
Աստուծոյ դատարանի հաւատարիմ ծառայ,

բարեխօսիր մեր համար:

Աբբա Արսէն,
Հոգու անդորրին կանչուած խաղաղուած հոգի,

բարեխօսիր մեր համար:

Աբբա Դաւիթ,
խոնարհութեան գագաթնակէտին հասած եղբայր,

բարեխօսիր մեր համար:

Անապատի մարգարէաշաւիղ Հայրեր եւ Մայրեր,
որ մեզ աւանդեցիք ըստ Հոգու կեանքը,

բարեխօսեցէք մեր համար:

Սուրբ Աթանաս, պաշտպան ուղղափառ հաւատքի,

բարեխօսիր մեր համար:

Սուրբ Բարսեղ,
Եկեղեցու եւ վանական կեանքի մեծ հայր,

բարեխօսիր մեր համար:

Սուրբ Գրիգոր,
աստուածաբան՝ որովհետեւ ընդունակ աղօթելու,

բարեխօսիր մեր համար:

Սուրբ Յովհան, Աւետարանին ծառայող ոսկի բերան,

բարեխօսիր մեր համար:

Սուրբ Օգոստինոս, Աստուծոյ հանդէպ ծարաւի երգիչ,

բարեխօսիր մեր համար:

Սուրբ Հերոնիմոս,
Աստուածաշնչի ընթերցման սիրահար,

բարեխօսիր մեր համար:

Սուրբ Ամբրոսիոս,
պաշտպան աղքատների ու տկարների,

բարեխօսիր մեր համար:

Սուրբ Բենեդիկտոս,
աստուածային եւ մարդկային ծառայութեան հայր,

բարեխօսիր մեր համար:

Սուրբ Ֆրանչիսկոս,
կատարեալ ուրախութեամբ Քրիստոսի աղքատը,

բարեխօսիր մեր համար:

Սրբուհի Քիռա,
աւետարանական արմատականութեան մեծ վկայուհի,

բարեխօսիր մեր համար:

Սրբուհի Քաթերինա,
կանացի կրակ դարձած ուժ եւ քաղցրութիւն,

բարեխօսիր մեր համար:

Սուրբ Սերովբէ Սարովցի,
Հոգու մարդը, որի աչքերը լի էին Աստուծով,

բարեխօսիր մեր համար:

Սուրբ Սիդուանոս Աթոս Լեռան,
Աստուծոյ սիրոյ երգիչ դժոխքում,

բարեխօսիր մեր համար:

Սրբուհի Թերեզա Յիսուս Մանկան,
առաքեալ՝ Եկեղեցու սրտում,

բարեխօսիր մեր համար:

Դուք բոլորդ, Իսրայելի մաքուր հոգիներ,

բարեխօսեցէք մեր համար:

Դուք բոլորդ, Քրիստոսի Եկեղեցու Սրբեր,

բարեխօսեցէք մեր համար:

Դուք բոլորդ, երկրի վրայ
երբեւէ եւ ուրեւէ ապրած արդարներ,

բարեխօսեցէք մեր համար:

Մարկաւագ.-

Սուրբ Աստուածածինը եւ բոլոր Սրբերը բարեխօս ունենանք Աստուծոյ բարերար Որդու առաջ, որպէսզի կամենալով ողորմի եւ զթալով փրկի Իր արարածներին: Ամենակալ Տէր Աստուած մեր, փրկիր եւ ողորմիր:

Նախագահող.-

Ընդունիր, Տէր, մեր աղաչանքները, Սուրբ Աստուածածնի՝ Քո Միածին Որդու անարատ ծնողի բարեխօսութեամբ եւ աղաչանքներով Քո բոլոր Սրբերի, որոնց յիշատակն է այսօր: Լսիր մեզ, Տէր, եւ ողորմիր, ներիր, քաւիր եւ թող մեր մեղքերը: Արժանաւորիր գոհութեամբ փառաւորել Քեզ Որդու եւ Սուրբ Հոգու հետ, այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

